

Գրավադրվող գույքի և վարկառուի (համավարկառուի) դժբախտ պատահարներից ապահովագրություն			
N	Ապահովագրության տեսակ և շահառու	Վարկի ֆինանսավորման աղբյուր	
		«Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ	Բանկի սեփական ռեսուրս
1.1	Ապահովագրությունը իրականացնող անձ և շահառու	Վարկի գործողության ողջ ժամանակահատվածի համար ապահովագրությունը իրականացվում է Բանկի հաշվին, շահառու է հանդիսանում Բանկը:	չի կատարվում
1.2	Գրավի առարկայի ապահովագրություն* ¹ վարկի մնացորդային ժամկետի համար	Ապահովագրությունն իրականացվում է վարկի մնացորդի չափով:	
		Ապահովագրության պայմանագրով պետք է ծածկվեն առնվազն հետևյալ դեպքերից առաջացող վնասները. 1. հրդեհ կամ պայթյուն 2. երկրաշարժ 3. ջեռուցման, ջրամատակարարման կամ ջրահեռացման համակարգի վթար 4. կարկուտ ջրհեղեղ կամ տեղատարափ անձրև 5. փոթորիկ կամ ուժեղ քամի 6. երրորդ անձանց կողմից իրականացված չարամիտ գործողություններ	
1.3	Վարկառուի/համավարկառուի ապահովագրություն՝ վարկի ամբողջ ժամկետի համար	Իրականացվում է ապահովագրություն դժբախտ պատահարի արդյունքում կյանքից զրկվելու դեպքից և մշտական աշխատունակության կորստից՝ վարկի մնացորդի չափով;	
1.4	Կանխավճարի ապահովագրություն	Իրականացվում է հիփոթեքային պարտավորության ապահովագրություն՝ վարկ/գրավ 70% հարաբերակցությունը գերազանցող վարկի մնացորդի չափով:	

* Մեկից ավելի գրավադրված գույքերի դեպքում առաջին հերթին ապահովագրվում է ձեռք բերվող գույքը, ընդ որում, եթե ձեռք բերվող գույքի շուկայական արժեքը բավարարում է անհրաժեշտ ապահովագրական գումարի չափին, ապա մյուս գույքերը չեն ապահովագրվում կամ ապահովագրվում են մասամբ: